

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ի Ք

ՆՈՐ ՏՈՒՆԻՆ ԲՆԱԿՈՒԵԼԻՔ ԵՂԱՆԻՆ ՓՈՐՁԸ

Նոր շինուած տունը քանի որ աղէկ չորցած է, մէջը բնակիլը շատ վնասակար է առողջութեան: Եթէ կուզես իմանալ թէ արդեօք բաւական ցամքեր է նոր տունը թէ ոչ, այս փորձն ըրէ: Գործարանէն դեռ նոր ելած կիրը (քիլէճը) առ տրորէ, ու քանի մը հատ իրարու հաւասար մեծութիւն ունեցող բղուկներու (խաւանօզներու կամ փուլտուխներու) մէջ հաւասար չափով դիր այն կիրէն, զոր օրինակ 200-ական տրամ: Այն ամաններուն բերանը բաց ձգէ ու դիր զանոնք

տանը այլ եւ այլ սենեակներուն մէջ, դռներն ու պատուհաններն ալ աղէկ մը գոցէ: Վրան 24 ժամ անցնելէն ետեւ բոլոր այն ամաններն ալ կշռէ. թէ որ ամէն մէկ ամանին ծանրութիւնը մէկ տրամէն աւելի չէ աւելցած, ըսել է թէ կարելի է տանը մէջ բնակիլ, վտանգ չկայ. իսկ թէ որ 2 կամ 3 տրամէն աւելի ծանրացեր են, այն տանը մէջ բնակիլը դեռ վնասակար է առողջութեան:

ՕՐԱՑՈՅՑ

1864

Ն Ա Հ Ա Ն Ջ Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ի Ն Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի

Առաջակայ **1864** տարուան Օրացոյցը այժմէն հրատարակելովն իս' կցանկամբ հասարակութեան պէտքը լցուցանել իժամանակին:

Այս յայտնի է որ Օրացոյցը ամէն ատիճանի մարդկանց ալ հարկաւոր տետրակ մի է, այսինքն թէ եկեղեցականք եւ թէ աշխարհականք ստէպ ստէպ պէտք կունենան մէջը նայելու այլեւայլ նպատակաւ:

Անր նոր Օրացոյցը ուրիշ հայերէն Օրացոյցներու պէս ոչ միայն օրերն ու տօները ցուցնելու կծառայէ, այլ միանգամայն եւ աղգային պաշտօնական վիճակագրութիւն մի է նոր նախընթացին, Պետարապոյոյ, Խրիմու, Աժմէրխանու եւ Շամախույ մէջ բնակեալ աղգայնոց:

Փափաքելի էր մեզ որ ուրիշ երկիրներու, եւս առաւել Ռուսաստանի ձեռք եղած նահանգներու մէջ բնակեալ աղգայնոց վիճակագրութիւնն եւս կատարելապէս հրատարակեմք, բայց մեր խնդրեալ եւ սպասեալ պաշտօնական տեղեկութիւնները ժամանակին չհասնելով՝ չկարողացանք մեր փափաքանացն հասնիլ:

Սակայն եւ այնպէս՝ այս Օրացոյցը ոչ միայն հետաքրքրական պէտք է համարուի վերոյիշեալ նահանգաց մէջ բնակեալ հայոց, այլ եւ այն ամենայն աղգայնոց որ թէեւ օտար երկիրներ կընակին, բայց կփափաքին իրենց հեռաւոր եղբարցը վրայ ծանօթութիւն ստանալ: